

Ուսանողների վերհանված կրթական կարիքները և լուծումները (2010-2012)

2010		
	Վերհանված կարիքներ	Լուծում
1	Մասնագիտական առարկաներից գրադարանային ֆոնդի համալրում	Ձեռք է բերվել ներկայացված գրականության 60%-ը և աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվել են (տնօրենության նիստ թիվ 8, 25.03.2010թ. թիվ 26, 28.11.2008թ.)
2	Պրակտիկայի անցկացման արդյունավետության բարձրացում	Մասնաճյուղը պրակտիկայի արդյունավետ անցկացման նպատակով պայմանագրեր է կնքել Տավուշի մարզպետարանի, Իջևանի քաղաքապետարանի և տարածաշրջանում գործող 10 արտադրական, բանկային և այլ կազմակերպությունների հետ
3	Ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների համապատասխանեցումը ժամանակի պահանջներին, գործնական բնույթի ապահովումը, կատարման ընթացքի համակարգումը, Կիրառական արվեստի ֆակուլտետում արձաթից ավարտական աշխատանքների կատարում	Գիտխորհրդի թիվ 3 նիստում (11.06.2010թ.) որոշվել է յուրաքանչյուր ուսատարում վերանայել ավարտական և կուրսային աշխատանքների թեմատիկան, կազմել խորհրդատվության ժամանակացույցեր: Ավարտական աշխատանքներ չեն տրվել համապատասխան ռեսուրսների բացակայության պատճառով (տնօրենության թիվ 4 նիստ, 15.02.10թ.)
4	Նոր մասնագիտացումների անհրաժեշտություն՝ "Քանդակ և ձեփագործություն"	Գիտխորհրդի թիվ 3 նիստում (11.06.2010թ.) հաստատվել է Կիրառական արվեստի ֆակուլտետում "Մետաղի մշակում" մասնագիտացման փոխարեն "Քանդակ և ձեփագործություն" մասնագիտացում տալու հարցը:
5	Հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների մասնակցությունը առկա ուսուցման դասախոսություններին	Հեռակա ուսուցման համակարգի ուսանողները մասնակցում են առկա ուսուցման դասախոսություններին (տնօրենության նիստ թիվ 16, 11.09.2009թ.)
6	Ավարտական կուրսերում ակնարկային դասախոսությունների անցկացում	Բոլոր ֆակուլտետներում ավարտական կուրսերի համար կազմակերպվել են ակնարկային դասախոսություններ ամփոփիչ ատեստավորման մեջ ընդգրկված առարկաներից
7	Կրեդիտային համակարգի իրագրելում	Մասնաճյուղը յուրաքանչյուր տարի տպագրում է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, որը պարունակում է առաջին կուրսեցիների համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրությունների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման կարգի, առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:
2011		
	Վերհանված կարիքներ	Լուծում
1	Մասնագիտական գրականության (գրքեր, էլեկտրոնային գրքեր, դասախոսություններ) համալրում	Գիտխորհրդի թիվ 5 նիստ 09.09.2011թ., մինչ այժմ մասնաճյուղը շարունակում է գրադարանը մասնագիտական գրականությամբ (գրքեր, էլեկտրոնային գրքեր, դասախոսություններ) համալրելու գործընթացը:
2	Պրակտիկայի անցկացման արդյունավետության	Մասնաճյուղը պրակտիկայի արդյունավետ անցկացման նպատակով երկարացրել է նախկինում կնքված պայմանագրերը, դրանք ավելացնելով ևս մեկով:

3	Նոր որակավորուման անհրաժեշտություն՝ "Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա" մասնագիտության շրջանավարտներին "ուսուցչի" որակավորում տալու հարցը	Գիտխորհրդի թիվ 5 նիստում (09.09.2011թ.) որոշվել է "Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա" մասնագիտության շրջանավարտներին տալ "ուսուցչի" որակավորում:
4	Ռեսուրսներ լաբորատորաները հագեցնել սարքավորումներով, լսարանների սակավաթիվ լինելը, լսարանների լսահաստատում	Մասնաճյուղը պարբերաբար հագեցնում է լաբորատորիաները՝ ձեռք է բերում համակարգիչներ, այդ գործում իր ներդրումն ունի նաև ԵՊՀ-ն
5	Ավարտական կուրսերում ակնարկային դասախոսությունների անցկացում	Բոլոր ֆակուլտետներում ավարտական կուրսերի համար կազմակերպվել են ակնարկային դասախոսություններ ամփոփիչ ատեստավորման մեջ ընդգրկված առարկաներից:
6	Մասնագիտական առարկաների, գործնական և սեմինար պարապմունքների ժամաքանակների ավելացում (Ուս. հաստում)	Բոլոր ֆակուլտետներում առկա են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ժամանակացույցեր, որոնց շնորհիվ ուսանողը լրացնում է այդ բացը:
7	Դասապրոցեսի ընթացքում ցուցադրել թեմատիկ ֆիլմեր	Համապատասխան առարկաներից անհրաժեշտության դեպքում դասապրոցեսի ընթացքում ցուցադրվում են թեմատիկ ֆիլմեր:

ՖԽ

2012

	Վերահանված կարիք	Լուծում
1	Նոր մասնագիտացումների անհրաժեշտություն՝ "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա", "Էկոլոգիական քիմիա"	Գիտխորհրդի թիվ 4 նիստում (17.09.2012թ.) ԵՊՀ հաստատմանն է ներկայացվել "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա", "Էկոլոգիական քիմիա" մասնագիտացումների հարցը:
2	"Ակունք" գիտական հոդվածների ժողովածուում և նրա հավելվածում ուսանողների հոդվածների տպագրման, ուսանողական գիտական ընթերցումների խորհրդի տասնամյակի հարցը	Գիտխորհրդի թիվ 4 նիստում (17.09.2012թ.) որոշվել է "Ակունք" գիտական հոդվածների ժողովածուում և նրա հավելվածում տպագրել ուսանողների հոդվածները, ուսանողական գիտական ընթերցումների նյութերը:
3	Ռեսուրսներ Օնլայն լսարան, Լինգվաֆոնային լսարան	Տնօրենության թիվ 1 նիստում (09.01.2012թ.) որոշվել է մինչև փետրվարի 7-ր բազել օնլայն լսարան:
4	Նոր մասնագիտացման բացում՝ "Լրագրություն"	Հումանիտար գիտ. ֆակուլտետի խորհրդի թիվ 8 նիստում (25.06.12թ.) որոշվել է "Հայոց լեզու և գրականություն" մասնագիտության 3-րդ կուրսում 2012-13 ուստարում որպես լրացուցիչ դասընթաց ներառել "Լրագրություն" առարկան:
5	Պրակտիկ մասնագետի վարպետության դասերի անհրաժեշտություն	Տնտեսագիտության ֆակուլտետի ավարտական կուրսերի համար բանկային համակարգում փորձառու մասնագետի կողմից իրականացվել է "Բանկեր և բանկային գործ" պրակտիկ ուղղվածության դասընթացը /ֆակուլտետի խորհրդի թիվ ? նիստ/
6	Պրակտիկայի անցկացման արդյունավետության բարձրացում,	Մասնաճյուղը պրակտիկայի արդյունավետ անցկացման նպատակով երկարացրել է կնքված պայմանագրերը, նոր պայմանագրեր կնքել նաև Տավուշի մարզային գրադարանի, ոստիկանության մարզային վարչության, ընդհանուր իրավասության դատարանի հետ:
7	Ավարտական կուրսերում ակնարկային դասախոսությունների անցկացում	Բոլոր ֆակուլտետներում ավարտական կուրսերի համար կազմակերպվել են ակնարկային դասախոսություններ ամփոփիչ ատեստավորման մեջ ընդգրկված առարկաներից
8	Գնահատման թեստային համակարգի և գնահատման կարգի վերանայում (Ուս խորհրդի նիստ)	Ուսումնական վարչությունը Ուս. Խորհրդի հետ հանդիպման ժամանակ հիմնավորել է թեստային համակարգի ներկայիս գնահատման կարգի նպատակահարմարությունը՝ նշելով, որ այն նպաստում է առանձին թեմաների յիարժեք յուրացմանը:

ՖԽ

ՖԽ

9	Մասնագիտական առարկաների, գործնական և սեմինար պարապմունքների ժամաքանակների ավելացում (Ուս. հարցում)	Բոլոր ֆակուլտետներում առկա են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ժամանակացույցեր, որոնց շնորհիվ ուսանողը լրացնում է այդ բացը:	
10	Սեմինար և գործնական պարապմունքների ազդեցությունը երգարափակիչ քննության արդյունքի վրա	Ըստ կրեդիտային համակարգի գնահատման կարգի վերջնական գնահատականը բաղկացած է նախօրոք հստակ սահմանված մասնաբաժիններից և հաշվի առնել սեմինար և գործնական պարապմունքների գնահատականները հնարավոր չէ:	
11	Ընթացիկ քննությունները և ստուգումները լինեն միայն բանավոր (Ուս. հարցում)	Ընթացիկ քննություններն անց են կացվում թեստային համակարգով, իսկ ընթացիկ ստուգումների անկացման ձևը որոշում է ամբիոնը:	
12	Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների հայտնի ավեստագետների արվեստանոցներ, պատկերասրահներ, թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ սպեցիալ հարց	Պարբերաբար կազմակերպվել են այցելություններ նշված վայրեր, ավարտական աշխատանքների էսքիզներ են կատարվել Արցախի պատմամշակութային վայրեր Շուշի, Ստեփանակերտ, Գանձասար, այցելության ժամանակ:	
13	Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների միջքաղաքային, քաղաքային ցուցահանդեսների մասնակցության հարց	Ուսանողները մասնակցել են ֆակուլտետի կողմից կազմակերպած տարբեր ցուցահանդեսների:	
14	Առանձին առարկաների տեսական գիտելիքների գործնական կիրառում համապատասխան հիմարկներում	Նախատեսվում է ամբիոններին հանձնարարել առաջիկա նիստերում տարբեր առարկաների համար քննարկել սեմինար և գործնական որոշ դասաժամերի անկացման հնարավորությունը մասնաճյուղում կամ այլ կազմակերպություններում:	ՖԽ
15	Ընթացիկ քննությունների հարցաշարերում չընդգրկել ամբողջ ծրագրային նյութը	Ուսումնական վարչության և Ուս. Խորհրդի հանդիպման ժամանակ որոշվել է ընթացիկ քննությունների ժամանակ ներառել հարցեր մինչև 4 թեմաներից:	ՖԽ
16	Օտար լեզուների ավելի խորացված ուսուցում	Խաղաղության կորպուսի կամավորները մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետում դասացուցակում հատկացված ժամերին վարում են անգլերեն լեզվի դասներ, ունեն անգլերենի ակումբ, որում ներառված են ուսանողներ՝ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից:	ՖԽ
17	Դասախոսության մի մասը անցկացնի ուսանողը	Ամբիոններին հանձնարարվել է առաջիկա նիստերում քննարկել դասախոսությունների մի հատվածը ուսանողների կողմից անցկացման հնարավորությունը:	ՖԽ
18	Դասախոսական կազմի համալրումներ որակյալ կադրերով	Մասնաճյուղում պարբերաբար կազմակերպվում են դասախոսական անձնակազմի վերապատրաստման դասընթացներ	ՖԽ
19	Դասախոսների անկողմնակայությունը		ՖԽ
20	Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների ընդգրկվածությունը ուսանողական կառույցներում	ՌԻԽ-ին և ՌԻԳԸ-ին հանձնարարվել առաջիկա նիստերում քննարկել հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին իրենց կառույցներում ընդգրկելու հարցը:	ՖԽ
21	Հեռակա ուսուցման համակարգում ժամանակացույցի արդյունավետ կազմակերպում	Քանի որ հեռակա ուսուցման համակարգի դասերն ընթանում են առկա ուսուցման համակարգի դասերին զուգահեռ, ուստի դասապրոցեսը կազմակերպել ավելի շուտ հնարավոր չէ:	ՖԽ
22	Ուսանողների գիտական ակտիվության հաշվի առնելը կրթաթոշակներ տրամադրելիս	Վերհանված կարիքը և ՌԻԳԸ-ի և ՌԻԽ-ի մշակած ուսանողի ակտիվության գնահատման սանդղակը ներկայացվել է Մանդատային հանձնաժողովի քննարկմանը:	ՖԽ
23	Նույն դասախոսը միևնույն կուրսում օրվա ընթացքում 3 դասաժամից ավելի չպարապի	Դեկանները, դասացուցակները կազմում են հնարավորինս բացառելով նույն դասախոսի միևնույն կուրսում մի քանի դասաժամ ունենալը, սակայն լինում են բացառություններ՝ պայմանավորված Երևանից հրավիրված դասախոսների ծանրաբեռնվածության հետ:	ՖԽ